ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի որոշումը կատարելու, բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտների ավելացումը Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. արտահերթ թիվ 3 նիստի թիվ 21-Ն որոշումը.

1) Նվազեցնել բյուջեի վարչական մասի եկամուտների հատված 1 տող 1113 <Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ> տարեկան պլանը 55000.0 հազ. դրամ:

2) Ավելացնել բյուջեի վարչական մասի եկամուտների հատված 1 տող 1111 <Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար> տարեկան պլանը 35000.0 հազ. դրամ և տող 1112 <Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար> տարեկան պլանը 20000.0 հազ. դրամ:

3) Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով՝ Ճապոնիայի կառավարության կողմից սուբվենցիայի հատկացումը.

1) Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների հատված 1 տող 1241 <Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով> տարեկան պլանը 49.4 հազ. դրամ:

2) Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի ծախսերի նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածը /հոդ. 5113/ 49.4 հազ. դրամ:

3) Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2121-Ն որոշման 4-րդ կետի 6-րդ ենթակետը և N5 հավելվածի N9 աղյուսակի 38-րդ կետը.

1) Ավելացնել բյուջեի վարչական մասի եկամուտների հատված 1 տող 1257 <Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)> տարեկան պլանը 543.8 հազ. դրամ:

2) Ավելացնել բյուջեի վարչական մասի ծախսերի արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 543.8 հազ. դրամ:

3) Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատի համայնքի ավագանու 2022 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

4. Նվազեցնել՝

1) Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը /բաժին 11, խումբ 1, դաս 2, հոդ. 4891/ 113000.0 հազ. դրամ:

5. Ավելացնել՝

1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածը /հոդ. 4212/ 2000.0 հազ. դրամ, <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածը /հոդ. 4239/ 3000.0 հազ. դրամ, <Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում> հոդվածը /հոդ. 4252/ 2000.0 հազ. դրամ և <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածը /հոդ. 4269/ 3000.0 հազ. դրամ:

2) Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում> հոդվածը /հոդ. 4251/ 15000.0 հազ. դրամ:

3) Աղբահանում /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Կոմունալ ծառայություններ> հոդվածը /հոդ. 4213/ 33000.0 հազ. դրամ և <Տրանսպորտային նյութեր> հոդվածը /հոդ. 4264/ 50000.0 հազ. դրամ:

4) Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ> հոդվածը /հոդ. 4111/ 5000.0 հազ. դրամ:

5) Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: